Էդմոն Մարուքյան

Ծնվել է 1981թ. հունվարի 13-ին Վանաձորում:

Կրթություն՝

2002թ.	Մոսկվայի կոմերցիայի և իրավունքի ինստիտուտի իրավագիտության ֆակուլտետ, իրավագիտության բակալավր,
2006թ.	Վարշավայի մարդու իրավունքների բարձրագույն դասընթաց, Մարդու իրավունքների և շահերի պաշտպանության մասնագետի որակավորում,
2007թ.	ՀՀ պետական կառավարման ակադեմիա, իրավագիտության մագիստրատուրա, իրավագիտության մագիստրոսի աստիճան,
2010թ.	Մինեսոտայի համալսարանի իրավաբանական դպրոց, Մարդու իրավունքների և միջազգային իրավունքի մագիստրոս (ԱՄՆ),
2009-2010թթ.	Մինեսոտայի համալսարան, Humphrey Fellowship ծրագրի շրջանավարտ (ԱՄՆ),
2013թ.	«John Smith Trust» հիմնադրամի շրջանավարտ (Միացյալ Թագավորություն),
2016թ.	Ստենֆորդի համալսարան, Դրեյփըր Հիլզի ժողովրդավարության ու զարգացմանը նվիրված ծրագրի շրջանավարտ (ԱՄՆ),
2017թ.	Միջազգային առաջնորդության ծրագրի շրջանավարտ (Միացյալ Թագավորություն):

Աշխատանքային գործունեություն՝

2001 թվականից սկսած մասնագիտացել է մարդու իրավունքների պաշտպանությամբ և ներգրավվել է ՀՀ-ում ժողովրդավարությունն ամրապնդելու և քաղաքացիական հասարակությունը կայացնելու գործում:

2001-2003թթ. «Մեդիա Գրուպ» լրատվական ՀԿ իրավաբանական բաժնի ղեկավար:

2005թ. ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի անդամ, 2006թ. ընտրվել է խմբի նախագահ:

2005-2012թթ. անդամակցել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդական խմբին:
Մարդու իրավունքների մասնագիտացմամբ փաստաբան է՝ սկսած 2008թ. և «Ռազմավարական դատավարությունների կենտրոն» իրավապաշտպան ՀԿ նախագահ՝ 2010թ.-ից: Աշխատել է որպես իրավախորհրդատու՝ պաշտպանելով քաղաքացիներին դատարանում, վարել ռազմավարական դատավարություններ ինչպես ներպետական ատյաններում, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում:

2010-2012թթ. «Human Rights Watch» միջազգային իրավապաշտպան կազմակերպության ազգային փորձագետ:

2012-2021թթ. ՀՀ ԱԺ 5-րդ և 6-րդ գումարման պատգամավոր, 7-րդ գումարման ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար:
2015թ.-ից «Լուսավոր Հայաստան» կուսակցության կառավարման խորհրդի նախագահ:

Խորհրդարանական աշխատանքի տարիներին եղել է ՀՀ ԱԺ հետևյալ մշտական հանձնաժողովների, ինչպես նաև միջխորհրդարանական կառույցների անդամ՝

- 2012-2017թթ. (5-րդ գումարման ԱԺ)՝ Պետական-իրավական հարցերի, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի, Արտաքին հարաբերությունների, Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովների, ինչպես նաև Արևելյան գործընկերության ԽՎ («Եվրանեսթ»), Հայաստան-ԵՄ խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի անդամ,
- 2017-2019թթ. (6-րդ գումարման ԱԺ)՝ Պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստան-ԵՄ խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի, ՆԱՏՕ-ի ԽՎ անդամ.
- 2020-2021թթ. (7-րդ գումարման ԱԺ)՝ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ:

2018-2021թթ. պատվիրակության կազմում Հայաստանը ներկայացրել է ԵԽԽՎ-ում: Անդամակցել է ԵԽԽՎ հետևյալ հանձնաժողովներին՝

- Մարդու իրավունքների և իրավական հարցերով հանձնաժողով (հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ),
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորների ընտրության հարցերով հանձնաժողովի անդամ,
- ԵԽ անդամ պետությունների պարտականությունների և պարտավորությունների կատարման (Մոնիթորինգի) հանձնաժողովի անդամ,
- Հավասարության և խտրականության արգելքի հանձնաժողովի անդամ:

2021 թվականի դեկտեմբերի 17-ից ներգրավված է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված սահմանադրական բարեփոխումների խորհրդի կազմում:

Այլ տեղեկություններ՝

1999-2001թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Գիտական մի շարք հոդվածների, վերլուծական ձեռնարկների և մարդու իրավունքների վերաբերյալ զեկույցների հեղինակ և համահեղինակ է:

Օտար լեզուների իմացություն՝

ռուսերեն, անգլերեն:

Ընտանեկան կարգավիճակ՝

ամուսնացած է, ունի երկու որդի և մեկ դուստր: